

ԿԱՆՈՆԱԳԻՐ

ԳԱՀԻՐԷԻ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ

ՄԻՈՒԹԵԱՆ

ՀԻՄՆՈՒԱԾ

1916 ՅՈՒՆԻՍ 28

2001



2010

ԳՅԱՀԻՐԷ:

ՏՊԱՐԱՆ ՍՈԿՐԱՏ ՍԱՐՐԱՖԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

1916



ԿԱՆՈՆԱԳԻՐ

ԳԱՀԻՐԷԻ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԳԴԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ

ՆՊԱՏԱԿ

Յօդուած 1.— Հայ Երիտասարդաց Միութիւնը կազմուած է 1916 Յունիս 28 ինչ որուն նպատակն է ստեղծել բոլոր այն միջոցները որոնք կը բարձրացնեն Հայ Երիտասարդութեան բարոյական, մտաւորական և ֆիզիքական կեանքը:

Միութիւնա՝ համակիր կամաւորական շարժումին և կարեկիւր հայ ստաւապանքին՝ ստանց կուսակցական և հասանքի խարութեան՝ պիտի ջանայ միջոցներ ստեղծել, ստատրելու Հայ ստաւապանքին ու Հայ կամաւորական շարժումին:

Յօդ. 2.— Միութիւնա իր նպատակին իրագործման համար պիտի սեննայ հետեւեալ միջոցները.

Ա. Գրական, Բ. Գեղարուհասական և
Գ. Ֆիզիքական

Մանօր.— Վերոյիշեալ ֆիզոցներուն իւրաքանչիւր ճիւղը պիտի ունենայ իրեն յատուկ անուանը:

Ա. Գրականը՝ Զարբօնի խումբ
Բ. Գեղարուհասականը՝ Կովկաս
Գ. Ֆիզիքականը՝


ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ

Յօդ. 3.— Միութիւնն կը բաղկանայ կրկու մարմիններէ. Ա. Գիւան, Բ. Գործադիր վարչութիւն, և կ'ունենայ նաև իր խումբերու կազմական մարմինները

Յօդ. 4.— Գործադիր վարչութիւնը կը բաղկանայ եօթը անդամներէ որոնց պաշտօնավարութիւնը կը սեէ մէկ սարի և վերընարելի են

Յօդ. 5.— Կազմական մարմինները կ'ընարուին իրենց խումբերէն և կը վաւերացուն Գործ. Ժողովէն

Գործադիր Ժողովը իրաւունք ունի ի հարկին զանոնք լուծելու և անոնց սեղ նորեր ընարելու, լուծման պարագային Գործադիր Մարմինը պիտի առժամապէս վարէ



Յօդ. 6.— Իւրաքանչիւր կողմակա՛ն մար-
մին կ'ու՛նենայ իրեն ներքին կանոնա-
գիրը, որ կ'ենթարկուի Գործ. վարչու-
թեան վաւերացման:


Յօդ. 7.— Գործ. վարչութեան անդամ-
ները կ'ընտրուին Ընդհանուր Ժողովէն
գաղանի քուէից բացարձակ մեծամասնու-
թեամբ, իսկ համեմատականի մնացածները
կ'ընտրուին երկրորդ քուէարկութեամբ:

Յօդ. 8.— Գործ. վարչութիւնը բացար-
ձակ լիազօրութիւն ունի Միութեանս բա-
ւոյր գործերը վարելու՝ Միութեան կանո-
նադրին համաձայն:

Յօդ. 9.— Գործ. վարչութիւնը միայն
իրաւունք ունի ստորագրել Միութեան վե-
րաբերեալ բոլոր նամակները, ընկալապիր-
ները, սոմսերը եւլն:

Յօդ. 10.— Միութիւնս կ'ու՛նենայ մէկ
կնիք, Միութեան անունը կրող, որ կը պահ-
ուի Գործ. վարչութեան տաննապետին քով:

Յօդ. 11.— Եթէ Գործ. վարչութեան
չրջանի աւարակէն ստաջ հրամարտներ
գանուին, վարչութիւնը պարտի Ընդ.
Ժողովէն առաւելապէս քուէ շահողին նա-
խադասութիւն տալ ն. գոյն վարչական
Ժողովի անդամ ընդունիլ:



Յօդ. 12.— Վարչական ժողովը մեծա-
մասնութիւնը կորսնցուցած պարագային
լնդհ. ժողով կը զուժարուի և կ'ընարուի
նոր վարչութիւն մը, նոր ասրեշրջանի
համար:

ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԻՒՆ

Յօդ. 13.— Միութեանս կրնան անդա-
մակցիլ բոլոր 18 ասրեկանէ վեր հայ երի-
տասարդներ, առանց սեւի խարութեան:

Յօդ. 14.— Միութիւնս կը բաղկանայ
Ա. Գործօն անդամներէ, Բ. Պատուոյ ան-
դամներէ:

Յօդ. 15.— Գործօն անդամ են ամէն
անոնք՝ որոնք ամտական աւնուաղն 3 դա-
հեկան կը վճարեն և կը մասնակցին Միու-
թեանս բոլոր գործերուն:

Յօդ. 16.— Պատուոյ անդամ են ամէն
անոնք՝ որոնք Միութեանս գնահատելի
ծառայութիւն մը կը մատուցանեն ս և է
ձևի տակ:

Մանօր.— Նիւնահան նուէրը պիտի ըլլայ մի-
նուսեք արձուարչն 5 ոսկի դրամ և կամ « և է
գոյ+ այն գումարին արժողութեամբ:

Յօդ. 17.— Պատուոյ անդամներ կ'ան-

սանուին Ընդհ. ժողովէն՝ վարչութեան
առաջարկով:

Յօդ. 18. — Միութեան անդամակցիլ փա-
փաքողներ պարտին երկու անդամներէ
վկայութիւն բերել՝ իրենց ինքնութիւնը
հաստատել:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Յօդ. 19. — Ընդհ. ժողովը կը կազմուի
Միութեան զործօն եւ պատուոյ անդամ-
ներէն:

Ծանօթ. — Պատուոյ անդամները Ընդհ. ժողովոյ
Բջ կ'ընդունան ին որպէս պատուակալ խորհրդա-
կաններ արանց ընտրելու եւ ընտրուելու իրա-
ւանք ունենալու:

Յօդ. 20. — Ընդհանուր ժողովը օրինա-
կան կը համարուի անդամներուն թիւին
կէսէն մէկ աւելի ներկայութեամբ, իսկ մե-
ծամասնութիւն չգոյանալու պարագային,
երկրորդ ժողովը օրինական կը համարուի,
ինչ որ ալ ըլլայ ներկաներուն թիւը,
պայմանաւ որ նախորդ ժողովի օրակար-
գով զբաղի:

Յօդ. 21. — Ամէն անգամ որ երեք սմ իս
յաջորդաբար միութեան իր անդամավճարը
չի վճարէր, առանց բանաւոր պատճառի,
հրաժարեալ կը նկատուի:

Իսկ միութեան նպասակին գէժ անպար-
տաճանաչ գտնուող ո եւ է անգամ Ընդհ.
ժողովոյ որոշումով կը հրաժարեցուի:

Յօդ. 22. — Գործադիր վարչութեան գանձարկարը որոշ ապահովութեամբ երաշխաւորեալ պէտք է ըլլայ :

Յօդ. 23. — Բացի Միութեանն ի նպաստ եղած հանդէսներէ, հանգանակութիւններէ և անդամաձօարներէ, կամ Միութեանն մասնաւորապէս եղած օգնութիւններէ, կամաւորներու և Հայ առատապանքին ի նպաստ եղած հանգանակութիւններու, հանդէսներու և նիւթական հասոյթներու գումարը ամբողջովին կը զրկուի վեհափառ կաթողիկոսին՝ վարչութեան ձեռքով :

Ծանօթ. — Ուղարկուած դրամը կէս աս կէսի դրոմբեամբ պիտի բաժնուի, կէսը կամասորներու և կէսն ալ Հայ արարատեան, հասաստարարացի :

Յօդ. 24. — Միութեանն միշտ սրատրաստ պիտի ըլլայ օժանդակելու Ազգ. բոլոր կազմակերպութիւններուն և բարենպաստակ հաստատութիւններուն, երբ պահանջը ս կ է մարմնայ կողմէ ըլլայ :

Ծանօթ. — Տարբեր ֆոնդիաններու և հասարակարարաններու աններու անվարաններուն արժէքն հաստատուած նիւթեան վարչարաններուն կը պահանջուի ի նպաստ Միութեանն արեւակեան ժողովուրդին :

ՀԱՍՈՅԹՆԵՐ

Յօդ. 25. — Միութեանս հասոյթներն են, անդամ ավճար, նաւիրատուութիւն, վիճակահանութիւն, թաարսն, երկկոյթ եւլն:

Յօդ. 26. — Միութեանս գրական ճիւղը, եթէ ի վիճակի ըլլայ, կրնայ պարբերաբար թերթ կամ պրօշխուհներ հրատարակել, որոնց հասոյթը կը պատկանի գրական ճիւղին զարգացման:

Յօդ. 27. — Միութեանս ս եւ է կազմական Մարմինը եթէ գրամական պէտք ունենայ, գոյք եւայլն գնելու համար, պէտք է գիմէ Գործ. վարչութեան:

Ծանօթ. — Գործադիր վարչութիւնը պէտք է ջանայ բացարեւի միջոցով ճշ պար պահանջին գողացում տալ, հակառակ պարագային մայն՝ պէտք մարտնչի իր գանձէն ծախսել:

ԿԱԶՄԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

Յօդ. 28. — Կազմական Մարմինները կ'ուսնենան երեքական անդամ:

Յօդ. 29. — Կազմական Մարմինները իրենց ներքին գործերը վարելու բացարձակ ազատութիւնը ունին:

Յօդ. 30. — Ամէն անգամ որ Գործ. վարչութիւնը ս եւ է նոր ձեւնորակի սկսի,

կազմական խումբերու հետ պէտք է բա-
նակցի, հաստատելու համար անոնց սյօր :

Յօդ. 31. — Կազմական Մարմինները
գրամական գործերու շին կրնար միջա-
մուխ ըլլալ :

Յօդ. 32. — Միութեան կանոնադիրը
մէկ սարիէն առաջ չի կրնար փոխախու-
թեան ենթարկուիլ :

Յօդ. 33. — Միութիւնս պիտի ջանայ
համագործակցութեան բերել իր նպատակին
ծառայող կամ արդէն խիլ գոյութիւն ու-
նեցող նոյնանպատակ մարմիններ, առանց
հակամարտութեան :

Յօդ. 34. — Միութեան նպատակը և
գրամ գրկելու եղանակը կը մնայ բացար-
ձակապէս անփոփոխ :

Յօդ. 35. — Միութիւնս պիտի ունե-
նայ իր կեդրոնաատեղին :

ԼՈՒԾՈՒՄ

Յօդ. 36. — Միութիւնս լուծուած պա-
րագային, իր ունեցած գոյքերը կը ծախէ
Առաջնորդարանի միջոցաւ, և արմէքը
իւր նպատակին կը յատկացնէ :

— ՎԵՐՋ —